***Կարգապահական գործ թիվ 18108***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2018թ-ի հոկտեմբերի 18-ի թիվ 267-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/206-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳՐԻԳՈՐ ՔԱԼԱՇՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյանի, Խորհրդի անդամներ՝ Տարոն Սիմոնյան, Տիգրան Խուրշուդյան, Սիմոն Բաբայան, Կարեն Սարդարյանի, Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Գրիգոր Քալաշյանի (արտոնագիր՝ թիվ 355), (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

***Պ Ա Ր Զ Ե Ց՝***

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

14.05.2018թ. Պալատ է մուտքագրվել Դավիթ Իսպիրյանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որում հայտնվել է որԴիմողն ու Վալերի Ալումյանը թիվ ԱՎԴ/0021/01/17 քրեական գործով հանդիսանում են տուժող Հովհաննես Իսպիրյանի իրավահաջորդները, իսկ ամբաստանյալ Գրիգոր Մխիթարյանի ներկայացուցիչն է հանդիսանում փաստաբան Գրիգոր Քալաշյանը: Ամբաստանյալ Գրիգոր Մխիթարյանը դատարանի դատավճռով դատապարտվել է 8 տարվա ազատազրկման: Դիմողն ու Վալերի Ալումյանը դատարան են ներկայացրել տուժողի հուղարկավորության ծախսերը, որոնք դատարանի կողմից ամբողջությամբ բավարարվել են:

Պատասխանողը 25.12.2017թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որում, անդրադառնալով Դիմողի հանգուցյալ հորը, նշել է հետևյալը. «Հետաքրքրական է նաև այն, որ տուժողի իրավահաջորդ Դավիթ Իսպիրյանն իր կողմից պահանջվող 2525000 գումարի չափը հիմնավորել է նրանով, որ հոգեհացին մասնակցելու են 400 անձ: Իրեն ով է խնդրում՝ հոգեհացին այդքան շատ մարդ հրավիրի, թե Դավիթը հոգեհացը հարսանիքի հետ է շփոթել: Նույնիսկ հարսանեկան

արարողությանը այդքան մարդ չեն հրավիրում, ինչ մնաց հոգեհացին:»:

Նշված մեջբերման կապակցությամբ Դիմողը գտել է, որ դրանով Պատասխանողի կողմից իր հոր՝ հանգուցյալ Հովհաննես Իսպիրյանի հուղարկավորության ծախսերին անդրադառնալիս՝ ոչ հարգալից վերաբերմունք է դրսևորվել ինչպես իր, իր ընտանիքի նկատմամբ, այնպես էլ՝ հանգուցյալ հոր հիշատակի նկատմամբ:

Դիմողը խնդրել է Գրիգոր Քալաշյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և նրան ենթարկել կարգապահական պատասխանատվության:

**2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 14.06.2018թ. թիվ 241-Ա/ԿԳ-18108 որոշմամբ փաստաբան Գրիգոր Քալաշյանի նկատմամբ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 2.2.3 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

18.06.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հայկ Պետրոսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

**3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>**

**<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է թեև պատշաճ ծանուցվել է Խորհրդի նիստի վայրի, օրվա և ժամի մասին:

**<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

18.05.2018թ. Պատասխանողը բացատրություն է ներկայացրել, որում հայտնել է ,որքրեական գործը, որում ներգրավված են Դիմողն ու Պատասխանողը, չի ավարտվել: Պատասխանողը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որում ինքն ու իր պաշտպանյալը մատնացույց են արել քրեական գործով քաղաքացիական հայցը քննելիս դատարանների թույլ տված մի շարք կոպիտ սխալներ՝ խնդրելով դատավճռի քաղաքացիական հայցի մասը բեկանել և այն ուղարկել ստորադաս դատարաններին՝ կատարելու նոր քննություն:

Ըստ Պատասխանողի՝ Դիմողի կողմից իր դեմ Պալատ բողոք ներկայացնելը նպատակ ունի Պատասխանողին ստիպել հետ վերցնել վճռաբեկ բողոքն այն դեպքում, երբ Պատասխանողը կատարում է իր մասնագիտական պարտականությունը: Եթե անգամ Պատասխանողն ինչ-որ բան այնպես չի գրել, ապա դա իր կարծիքը չէ, այլ՝ իր պաշտպանյալի: Պատասխանողը գտնում է, որ եթե անգամ շատ բաներում իր պաշտպանյալի հետ համաձայն չէ, ինքն իրավունք չունի դատավարական փաստաթղթերում չարտահայտել իր պաշտպանյալի դիրքորոշումը:

24.07.2018թ. ներկայացված բացատրությամբ Պատասխանողը հայտնել է , որվերաքննիչ դատարանում քաղաքացիական հայցվոր Դավիթ Իսպիրյանը (նրա ներկայացուցիչը) հայտարարեց, որ ինքը հանգուցյալ Հովհաննես Իսպիրյանի

հուղարկավորությանը հրավիրել է ոչ ավել, ոչ պակաս 400 մարդ և պահանջում էր ամբաստանյալից 2.250.000 ՀՀ դրամ: Իսկ մյուս տուժողի ներկայացուցիչը՝ Վալերի Ալումյանը, պահանջում էր 1.500.000 ՀՀ դրամ: Քաղաքացիական հայցվոր Դավիթ Իսպիրյանի հայտարարությունն առաջացրեց գործը քննող դատավորների և ներկա գտնվողների տարակուսանքը, ժպիտը, ծիծաղը: Պատասխանողը պատասխանեց քաղաքացիական հայցվորին, որ հուղարկավորությունը հարսանիք չէ, խրախճանք չէ, որպեսզի հուղարկավորմանը մարդկանց հրավիրեն, դրանով նա վիրավորում և նսեմացնում է հանգուցյալ Հովհաննես Իսպիրյանի հիշատակը: Քաղաքացիական հայցվորը և նրա ներկայացուցիչը շփոթվեցին և ձայն չհանեցին: Ներկաներից վիրավորվելով՝ քաղաքացիական հայցվորը (նրա ներկայացուցիչը) բողոք է ներկայացրել Պալատ Պատասխանողին պատժելու համար՝ նպատակ ունենալով ճնշում գործադրել Պատասխանողի վրա՝ ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացված բողոքը հետ վերցնելու համար, ինչը Պատասխանողը չի պատրաստվում անել. դա իր մասնագիտական պարտքն է:

Քաղաքացիական հայցվորները տեղյակ են, որ ընդհանուր իրավասության դատարանն իր դատավճռում թույլ է տվել կոպիտ սխալներ, իսկ վերաքննիչ դատարանն ուշադրություն չի դարձրել դատավճռում եղած դատական սխալներին, չի ուղղել դրանք, չնայած Պատասխանողն այդ մասին գրավոր հայտնել էր:

Պատասխանողը գտնում է, որ Դիմողի բողոքն անհիմն է:

Պատասխանողը Խորհրդի նիստին չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցվել է նիստի վայրի, օրվա և ժամի վերաբերյալ:

**3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.**

Նախապատրաստողը 13.08.2018թ. կազմել է եզրակացություն

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 21.08.2018թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 18.10.2018թ., ժամը՝ 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքում՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

**5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» **(այսուհետ նաև՝ Կարգ)** 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

***Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը,*** **հաստատված**

**է համարում հետևյալ փաստերը.**

- Դիմող՝ Դավիթ Իսպիրյանը և Պատասխանող՝ Գրիգոր Քալաշյանը ներգրավված են ԱՎԴ2/0021/01/17 քրեական գործում. Դիմողը հանդիսանում է տուժողի իրավահաջորդը, իսկ Պատասխանողը՝ ամբաստանյալի պաշտպանը:

*Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, Պատասխանողի բացատրություններով, Պատասխանողի կողմից ներկայացված վերաքննիչ և վճռաբեկ բողոքների պատճեններով:*

- Պատասխանողը 25.12.2017թ. ներկայացրել է վերաքննիչ բողոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարան, որում, անդրադառնալով Դիմողի հանգուցյալ հորը, նշել է հետևյալը. «Հետաքրքրական է նաև այն, որ տուժողի իրավահաջորդ Դավիթ Իսպիրյանն իր կողմից պահանջվող 2.525.000 գումարի չափը հիմնավորել է նրանով, որ հոգեհացին մասնակցելու են 400 անձ: Իրեն ո՞վ է խնդրում՝ հոգեհացին այդքան շատ մարդ հրավիրի, թե Դավիթը հոգեհացը հարսանիքի հետ է շփոթել: Նույնիսկ հարսանեկան արարողությանը այդքան մարդ չեն հրավիրում, ինչ մնաց՝ հոգեհացին:»:

*Նշված փաստը հաստատվում է Դիմողի դիմումով, վերաքննիչ բողոքի պատճենով, Պատասխանողի բացատրություններով:*

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գրիգոր Քալաշյանը փաստաբան է հանդիսանում 16.03.1999թ., և 2015-2018թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 14.06.2018թ. թիվ 241-Ա/ԿԳ-18108 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

**7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գրիգոր Քալաշյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար, հետևյալ պատճառաբանությամբ.

**Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն՝** *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

**- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ**

**սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.**

**- արդյո՞ք Պատասխանողն իր գործունեությամբ նպաստել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

***7.1.1. Արդյո՞ք Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:***

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով*** [2]:

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար, ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական*

---

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:

2 Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 ( no. 66232/10, § 27)

*պատասխանատվության սույն օրենքի և **<u>փաստաբանի վարքագծի կանոնագրքի</u>** <u>պահանջները խախտելու համար.</u>....:*

**7.1.2 արդյո՞ք մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում Պատասխանողն իր գործունեությամբ նպաստել է փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

**«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 2.2.3 ենթակետով փաստաբանի վրա դրվում է համակողմանի պարտականություն իր գործունեության բոլոր բնագավառներում նպաստել փաստաբանության մասնագիտական բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու արտահայտմանը: Սույն պարտականությունն ունի ինչպես պոզիտիվ, այնպես էլ՝ նեգատիվ բնույթի պարտավորության դրսևորում: Առաջին դեպքում ենթադրվում է փաստաբանի կողմից որոշակի ակտիվ գործողությունների կատարում սեփական մասնագիտական և անձնական վարկանիշի բարձրացման ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով փաստաբանի մասնագիտության հանրային վարկանիշի բարձրացմանը: Նեգատիվ պարտականությունը փաստաբանի պատշաճ վարքագծի նվազագույն շեմն է, երբ փաստաբանից պահանջվում է առնվազն չկատարել հանրորեն պարսավելի, անպարկեշտ, հակաօրինական և փաստաբանի մասնագիտության հանրային վարկը խաթարող գործողություն կամ անգործություն:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Նշվածի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե՝ այլ ոլորտներում: Ուստի՝ **փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ**, այլ ընդգրկում են նրա մասնագիտական-իրավական և բարոյական օրինակելիության բարձր

չափանիշներ միջանձնային և հասարակական ամենատարբեր շփումների և առնչությունների ժամանակ: Փաստաբանի՝ որպես անհատի գործունեությունը հասարակության կողմից ասոցացվում է փաստաբանի ինստիտուտի հետ, ուստի՝ փաստաբանն իր առօրյա գործունեության իրականացման ընթացքում պետք է դրևսորի այնպիսի վարքագիծ, որը կնպաստի փաստաբանի կոչման և առաքելության նկատմամբ հարգանքի և վստահության բարձրացմանը, ինչը փաստաբանի բարոյական պարտավորությունն է: Փաստաբանի օրինակելի վարքագծի կարևորագույն դրսևորումներից է իր գործընկերների և այլ անձանց անձի, արժանապատվության և համբավի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելը, միջանձնային քաղաքավարի վարվեցողությունը:

Վերը շարադրված սկզբունքները սահմանված են Կանոնակարգով, դրանք նախկինում կիրառվել են բազմաթիվ կարգապահական որոշումներում, որոնք հրապարակվել են ու բազմիցս քննարկվել իրավաբանների համայնքում, հետևաբար, դրանց բովանդակությունը և կիրառությունը որոշակի են ու կանխատեսելի:

Կարգապահական գործի նյութերով, Դիմողի և Պատասխանողի բացատրությամբ Խորհուրդը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Պատասխանողը, վերաքննիչ բողոքում անդրադառնալով իրավական խնդրի՝ տուժողի իրավահաջորդների հուղարկավորության ծախսերի չափի հիմնավորվածությանը՝ որպես իր պաշտպանյալի կողմից փոխահատուցման ենթակա վնաս, արտահայտել է մտքեր, որոնք որևէ կերպ չեն հիմնավորում Պատասխանողի իրավական դիրքորոշումը, այլ՝ առավելապես միտված են հուղարկավորության ծախսերի չափի քննարկումն իրավական հարթությունից տեղափոխել բարոյական ոլորտ: Դիմողի հոր հուղարկավորության ծախսերը համեմատելով հարսանեկան ծախսերի հետ՝ Պատասխանողը վիրավորել է Դիմողի՝ որպես տուժողի որդու արժանապատվությունը, որպիսի հանգամանքը չի կարող արդարացվել իրավական փաստարկման հիմնավորմամբ կամ վստահորդի շահերը բարեխղճորեն և ջանասիրաբար պաշտպանելու փաստաբանի պարտականությամբ:

Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողն իր բացատրությամբ ընդունել է, որ իր վարքագիծը հնարավոր է, որ ճիշտ չի եղել, սակայն նշել է, որ դա իր կողմից իր պաշտպանյալի դիրքորոշման արտահայտումն էր, որը Պատասխանողը՝ որպես փաստաբան, պարտավոր էր անել: Մինչդեռ Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողի փաստարկը հիմնավոր չէ, քանի որ Օրենքով և Կանոնագրքով պաշտպանվում է փաստաբանի վարքագիծը, որը նպատակաուղղված է իր վստահորդին ոչ թե ցանկացած, այլ՝ իրավաբանական օգնության ցուցաբերմանը և այնպիսի միջոցներով, որոնք արգելված չեն օրենդրությամբ կամ չեն հակասում դրան:

Այսպես՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Տվյալ պարագայում Պատասխանողի կողմից իր պաշտպանյալի շահերը ներկայացնելու ընթացքում Դիմողի և իր հանգուցյալ հոր հասցեին քննարկվող արտահայտությունների կիրառումը վերաքննիչ բողոքում չի կարող համարվել

իրավաբանական օգնություն, քանզի այդ արտահայտությունները և փաստարկները չունեն իրավական նշանակություն, այլ՝ իրենցից կարող են ներկայացնել պաշտպանյալին աջակցության ցուցաբերում ոչ իրավական՝ միջանձնային հարթությունում, որպիսի պարագայում կիրառելի չեն Օրենքով և Կանոնագրքով սահմանված երաշխիքները:

Բացի այդ, Կանոնագրքի 3.1.6 ենթակետի համաձայն՝ *եթե վստահորդի հանձնարարությունը և նրա համար ցանկալի արդյունքի հասնելու միջոցները օրինական չեն, ապա փաստաբանը պետք է վստահորդին պարզաբանի դրանց կիրառման անթույլատրելիության մասին և ցույց տա նույն կամ նման արդյունքի հասնելու հնարավոր օրինական ճանապարհը, և եթե այդուհանդերձ չի հաջողվում վստահորդի հետ համաձայնության գալ և նրան հետ պահել անօրինական միջոցների կիրառման մտադրությունից, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել վստահորդի հանձնարարությունը ընդունելուց:*

Վերոնշյալ իրավադրույթի ուժով փաստաբանը չի օգտվում պաշտպանությունից վստահորդի ոչ օրինական հանձնարարությունն ընդունելիս և կատարելիս: Փաստաբանն իրավունք չունի և չպետք է վստահորդից այնպիսի հանձնարարություն ընդունի, որն ի սկզբանե հակասում է օրենքին կամ փաստաբանի վարքագծի կանոններին:

Վստահորդի ոչ օրինական հանձնարարությունը փաստաբանի համար պարտադիր համարելու դեպքում փաստաբանը կկորցնի իր անկախությունը և ստիպված կլինի ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորել, ինչն անթույլատրելի է: Հետևաբար, Պատասխանողը պարտավոր չէ իրականացնել իր վստահորդի այնպիսի հանձնարարությունը՝ ներկայացնել և բարձրաձայնել իր վստահորդի այնպիսի դիրքորոշումը, որն օրինական չէ և (կամ) խախտում է այլ անձանց իրավունքները: Ավելին՝ Պատասխանողը պարտավոր է ձեռնպահ մնալ նման վարքագծից:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը մասնագիտական բնագավառում իր վարքագծով չի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը՝ թույլ տալով Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտում:

***Կարգապահական տույժի ընտրությունը***

**Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Խորհուրդը, հաշվի առնելով Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասում նշված հանգամանքները, գտնում է, որ փաստաբան Գրիգոր Քալաշյանի նկատմամբ պետք է կիրառել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

## *Ո Ր Ո Շ Ե Ց՝*

***1. Փաստաբան Գրիգոր Քալաշյանին (արտոնագիր՝ թիվ 355) ճանաչել մեղավոր Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար:***

***2. Փաստաբան Գրիգոր Քալաշյանի նկատմամբ (արտոնագիր՝ թիվ 355) կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:***

***3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

***<u>Ծանոթություն.</u>*** *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Մեժլումյան

**18 հոկտեմբերի 2018թ.**
**թիվ ԿԳ/206-Ա**
**ք. Երևան**